56. ԳՈՆՋՈՆ

Տրմաքար մարթըմ կէղնի, անուն Գոնջո։ Բեհրսաբ մալի ու տալվաթի տեր կէղնի։ Բըլե ուր մալ ուր բոկեն ցած չէրթա։

Հըմալ տրմաքար կէղնի օր շուկի միջեն խըսըլ կժողվե, կբերե զուր թունդիր կվառե։

Էդ քաղաք հ'ըմեն ըդ մարդուն կպատվին։

Ավուրըմ մեկ Գոնջոն կէլնի կէրթա բաղնեկ։ Էդ հ'երկրի փաշեն լե էն օր կէրթա բաղնեկ։

Գոնջոն ջուտ կլողկընա, կէլնի։ Փաշի մջակ լե ձեռքըմ կարմիր սոլ կբերե, կդնե էնդեխ օր փաշեն հ'ելնի բաղնից, հագնի։

Գոնջոն զէդ սոլեր օր կտեսնա, կասե՝ զայիր ընծիկ ին բերի։ Կէլնի կհագնի, կիգա ուր տուն։

Փաշեն կլողկընա, կէլնի զուր հալվըներ կհագնի, կտեսնա օր սոլ չկա։ Կհարցու բաղնեպընի մոտեն, կասե.—Ո՞րն է էկի էդա բաղնեկ։

Բաղնեպանն կասե.— Գոնջոն էր էկի։ Լողկրցավ, հ'ելավ հագավ ջուխտըմ կարմիր սոլ, գնաց ուր տուն։

Փաշեն կիգա ուր տեխ կնստի, մջկներուց մեկ կճամբե, կառնե զԳոնջոն, կիգա։ Կտեսնա օր ուր սոլեր օտներն է։

Կասե.— Գոնջո, էդա սոլեր հ'ուստե՞ն է քզի։

Գոնջոն կասե.—Գացիր ենք բաղնեկ, հ'ելա տեսա օր դրուվ էր էնդեխ. հագա ու էկա։

Փաշեն կասե.— Գոնջո, էդի իմ սոլերն է, դու լե գողութեն կէնի՞ս։

Երդում-պատուտում կէնե, փաջեն չավտրնա. կրռնե Գոնջոյից էրկու հարիր օսկի կառնե, աղեկըմ կջառիմե, կճամբե, կէրթա ուր տուն։

Գոնջոն երկու հարիր օսկին օր կիտա, ինատ կէնե, կբերե զսոլեր կթալե ջաղցի վանք։ Օր կթալե ջաղցի վանք, վանքի ծակ կբռնվի, թոշ կղարկե, կէրթա կլցվի փաշի բակ։

Փաշեն կասե.—Կիդի, էդա ջուր հ՝ուստե՞ն է էկի, լցվի իմ բակ։

Կասին.—Ջաղցի վանքեն։

Կճամբե, ղջաղցպան կառնե, կիգա։

Կասե.—Ես խաբար չունիմ, ինչ օր էրեր է, Գոնջոն է էրի։

Կճամբե զԳոնջոն, կառնե կիգա։

Կասե.— Գոնջո, էդա ի՞նչ ջուր է։

Կասե.— Ըպա իմա՞լ էնիմ, տարա զքու սոլեր թալի ջաղցի վանք, ասի՝ ազատիմ։

— Կիդի, տարեք զԳոնջոն աղեկըմ ջառիմեք։

Խըլայուզներ կառնեն, կէրթան աղեկըմ կջառիմեն, հինգ հարիր օսկի կառնին, սորա կթորկեն կիգա։

Գոնջոյի ճար կկտրի, զհինգ հարիր օսկին օր կիտա, ճիկար կմրոմըռա։ Կվերցու զսոլեր, կտանե թալե ծով, կասե՝ ազատիմ։

Էդ քաղքի մեջ լե թուճարըմ սընըխ հ՝ելեր էր, թալած են զդուքնի մալեր մեյդան կծախեն։

Գոնջոն կէրթա բեյ կիգա վրեն, տաս հազար օսկի կիտա, կառնե, կըլնա տուն։ Կասե՝ տանիմ զյոթ հարիր օսկու աճին հանիմ։

Էդ թուճրի դուքնի մալեր հ՝ըմեն ջուջաեղեն կէղնին, կբերե տուն, հոդի մեջ թարճրեկըմ կկապե, շարե վրեն։

Ջուկ բռնողներ կիգան ծով օր ձուկ բռնեն։ Հար հ՝իրկուն կթալեն զուրանց թոռներ, բան չէլնի։ Հ՝իրիկվան դեմ մեկ լե կթալեն, կտեսնան օր ծանդր բանըմ կա ուրանց թոռերու մեջ։

— Դը քաջեք, հ՝ըմեն ձուկ է։

Կքաշին հանին, ի՞նչ տեսնան աղեկ է. կտեսնան օր Գոնջոյի սոլերն է։ Ինատ կէնին, կառնեն կիգան Գոնջոյի փանջարի տակ ու, հայ-հայ հ՝օդի մեջ մեկ կզարկեն։ Կիգա քիսնի փանջարի ջամեր։ Ջջամեր կկոտրե, կէրթա քիսի թարջըրեք ու ինչ խրդար շուջաեղեն օր կեր՝ շրխոռ-շրխոռ կիգա ցած։

Գոնջոն կասե.— Ջանըմ, իմա՞լ կէղնի օր ես էդա սոլերու ձեռքեն ազատեմ։

Կասե.— Կանի տանիմ թալիմ տանիկ, թրդ չորնա, տանիմ իտամ փինաչոց, զիմ յախեն ազատիմ։

Կհանե դնե տանեկ օր չորնա։ Իմալ կէղնի մանդր ճժեր կելնին տանիկ, կխաղան, կբերեն հասուն ցըվքի վրեն։

Կնիկըմ լե զուր ճիժ գրկեր է, կիգա էդ տեխեն օր հ'ընցնի։ Գոնջոյի սոլ կփրթնի, կընկնի վըր էտ կնկա էրեխի գլխուն, էրեխեն կմեռնի։ Կնիկ կվերցու սոլն ու դեմ կքշե, կիգա փաշի մոտ։ Կասե.— Էկա Գոնջոյի պատի տրկեն կընցնեք, ցըվքեն թալեցին զէդա սոլի թայ իմ էրեխի գլխուն, սպանին։

Փաշեն կճամբե, զԳոնջոն կառնե կիգա։

Կասե.—Գոնջո, հար հ'եբ զքու սոլերու դարդ քաշի՞նք, դու զէդա կնկա էրեխեն հ'որի՞ սպաներ իս։

Գոնշոն երդում-պատրատում կէնե, անկաճ չրն էնի։ Կբերե զկնկա էրեխի արունկ հազար օսկի կառնե, կիտա կնկան։ Կասե.—Դու դնա, ջառիմեմ լե ուրեն։

Կառնե, նոր կթորկե զԳոնջոն, կէրթա։

Կասե.—Գնա, անգամ լե հրմալ բան չէնիս, օր հեղրմ լե հ'իգան քու վրեն գանգատ էնին, զգլոխդ կզարկիմ։

Գոնջոն կսրբե զբերան, կդառնա կիգա տուն։ Ինքն ուրեն կասե. «Իմա՞լ էնիմ, իմալ չէնիմ ազատիմ էդա սոլերու ձեռկեն»։ Կասե. «Կէլնիմ տանիմ իտամ տիրոջ, զիմ յախեն ազատիմ, էդոր սաբրբուն զիմ տուն ավրեցի»։ Կելնի զէրկու սոլ կէձգե փետի ծերն ու կքշե կիգա փաշի մոտ։

Փաշեն կտեսնա, կասե.— Էդի ի՞նչ է, Գոնջո։

— Փաշա, զքու օտկն իմ պագի, խալթըմ էր էրի, զէդա սոլեր առ, զիմ յախեն ազատե։

Փաշեն նոր կբռնե ջառիմե մը լե կառնե Գոնշոյից, ուր մշկներուն Կասե.—Վերցեք զէդ տոլեր, թալեք էնդին, Գոնջոն թըղ թողե էրթա։

Նոր Գոնջոն կթորկե կիգա ուր տուն, յախեն կազատի։